

15800

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ

ԵՒ

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ



Ս. Գ. ԱՐՋԵՄՈՒԵՐ
ԵՐԵՎԱՆ

Ֆ Ի Լ Ի Պ Է

1924

Բ Ա Յ Ա Տ Ր ՈՒ Թ Ի Ի Ն



Յանձնարարութեամբ՝ ներկայացնելով Պուլկարաչայ
Թեմի կազմակերպութեան կանոնադրութեան սոյն
նախագիծը՝ յաւակնութիւն չունի լիակատար, ո՛չ
ալ վերջնական գործ մը առաջարկելու:

Ինչպէս որ Եպիսկոպոս անուանը յոյց կուտայ,
առաջարկուածը լոկ ծրագիր մըն է, որու մէջ նետուած են
հիմնական գիծեր այնչափով, որչափ որ Յանձնարարութեամբ
հնարաւոր նկատած է զանոնք գործօն պուլկար պետական
օրէնքներու սահմանին մէջ՝ հետեւելով միանգամայն
Հայ Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն
ու նոր ժամանակներու պայմաններուն:

Նպատակաբար դատուած փոփոխութիւններէ, յապաւումներէ,
լրացումներէ վերջ միայն ան պիտի ստանայ իր ամբողջական
ու վերջնական ձևը, այնպէս ինչպէս որ պիտի ուզէ
գայն Պուլկարաչայ գաղութը:

Այս պատճառով կը ներկայացնենք գայն նախ իր
զնաչատումին ու քննութեան, խնդրելով որ ամէն հայ ուրի
ուրի ուսումնասիրել յետոյ ներկայ նախագիծը,
յո՛ղ իր դիտողութիւնները (ըստ կարելոյն հիմնաւոր)
ուղղակի Յանձնարարութեամբ, կամ, իր

00851

ՊՅԱԿԱՆ
ԲԱՅԵՆԱԴՐՈՒՄ

պատկանած չըջանին թաղական խորհուրդին, որ իր կողմանէ կուղարկէ զայն Յանձնախումբին:

Այս կերպով ստացուած բոլոր կարծիքները ամփոփուելով ի վերջոյ պիտի դասաւորուին իրենց վերաբերեալ նիւթին համաձայն ու պիտի ներկայացուին Համագումարին՝ դիւրացնելով մեծապէս այս կերպով վերջնոյն պաշտօնը:

Փափաքելի է որ գրութիւնները զրկուին ըստ կարելւոյն աւելի կարճ ժամանակամիջոցի մէջ:

Իսկ այն աղագայիներէն, որոնք ունէ հայ թերթի մէջ կը յայտնեն իրենց կարծիքը ներկայ նախադի մասին, կը խնդրուի նոյն թերթէն մէկ օրինակ զրկին Յանձնախումբին:

Ֆիլիպի

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՀԱՍՅԷ՝ АРМЕНСКО ЧЕРКОВНО НАСТОЯТЕЛСТВО

за Гакворъ К. Хиндлянъ

Пловдивъ



Ն Ա Ռ Ա Գ Ի Ծ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՆԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԵՒ
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՒ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

I. ՀՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Պուլկարահայու թեան կազմակերպութիւնը կը բովանդակէ իր մէջ Պուլկարիոյ բոլոր հայ համայնքները, ու իր նպատակն է գոհացնել անոնց կրօնական և մշակութային—աղագային կարիքները, իբրև մաս ազգային ամբողջականութեան: Իր վերոյիշեալ նպատակին և երկրին մէջ գոյութիւն ունեցող հիմնական օրէնքներու սահմանին մէջ, այս կազմակերպութիւնը լիովին ինքնավար է:

2) Ամէն հայ (Հուսաւորչական) պարտաւոր է գործադրել ներկայ կանոնադրութեան բոլոր արամագրութիւններն ու անոնց հիման վրայ եղած բոլոր կարգադրութիւնները:

II. ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

3) Բոլոր այն վայրերուն մէջ ուր կը բնակին 20 հայ ընտանիք կը կազմուի հայ համայնք, որ կը վաւերացուի Արտ. Գործոց և Կրօնից նախարարութեան կողմէ, առաջարկութեամբ թեմական խորհուրդին: Ներկայիս գոյութիւն ունեցող բոլոր համայնքները օրինական կը նկատուին: Այն տեղերը

ուր օրինականացած համայնք չկայ, ու կապրին հայեր, վերջինները կը հաշուեն ամենամօտ համայնքին անդամ:

4) Ամէն հայ առանց հպատակութեան խտրութեան պարտաւորիչ կերպով անդամն է, իր մնայուն բնակութեան շրջանի հայ համայնքին:

Մնայուն բնակութիւն ստանալու համար համայնքի մը մօտ, պէտք է հաստատուած ըլլալ համայնքին շրջանակին մէջ և նոյն համայնքին տօմարներուն մէջ արձանագրուած ըլլալ վեց ամիսէ ի վեր: Համայնքի մը անդամը, ուրիշ համայնքի մը շրջանը փոխադրուած ատեն, պարտաւոր է վաւերաթուղթով հաստատել, թէ ջնջուած է նախորդ համայնքի ընտանեկան տօմարներէն, եթէ ոչ չի կրնար արձանագրուիլ նոր համայնքին տօմարներուն մէջ:

5) Հայ համայնքը իրաւական անձնաւորութիւն մ'է, իրաւական անձնաւորութեան մը բոլոր իրաւունքներով: Ան իրաւունք ունի շարժուն և անշարժ կալուածներ ունենալու և ընդունելու նուիրատուութիւններ և կտակներ:

6) Հայ համայնքը կը հիմնէ, կը պահէ և կը վարէ եկեղեցիներ, դպրոցներ, բարեգործական ու ամէն տեսակի մշակութային—ազգային հաստատութիւններ:

7) Այն պարագային երբ համայնք մը կորսնցուցած ըլլալով իր ընտանիքներու օրինական թիւը (20) դադրի գոյութիւն ունենալէ, անիկա կը կցուի իրեն ամենէն մօտ գտնուող համայնքին և վերջինս կը տնօրինէ անոր գոյքերը, եթէ հինգ տարուայ պայմանաւ մի մը մէջ այդ համայնքը չվերակազմուի:

8) Համայնքին օրդաններն են. Թաղական Խորհուրդ, Հոգաբարձութիւն և Համայնքային ժողով:

9) Ամէն հայ համայնք կը կառավարուի Թաղական Խորհուրդէ մը, 7 հոգիէ բաղկացած:

ՄԱՆՕԹ. — Այնեղ ուր փոքրաթիւ հայութիւն կայ Թաղական Խորհուրդի անդամներուն թիւը կրնայ 7-էն պակաս ըլլալ:

10) Թաղակ. Խորհուրդը կ'ընտրուի համայնքի բոլոր անդամներէն ըստ համեմատական սիստէմի, ամէն երկու տարին անգամ մը, Փետրուար ամսոյ ընթացքին օր մը՝ որոշուած Արա. Գործ. և Կրօնից Նախարարութեան հրամանով և Թեմական Խորհուրդի առաջարկութեամբ:

Ընտրութիւնները կը կատարուին ներկայ կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն:

11) Բոլոր այն հայերը որոնք անդամ են համայնքին և լրացուցած են 21 տարին իրաւունք ունին ընտրելու:

12) Ընտրող չեն կրնար ըլլալ՝
Ա. — Անոնք որ դատապարտութեամբ զրկուած են իրենց քաղաքացիական և քաղաքական իրաւունքներէն, մինչև որ վերահաստատուին իրենց նոյն իրաւունքները:

Բ. — Օտար պետութեանց ծառայութեան եղողները:

Գ. — Անոնք, որոնք կը գտնուին գատական արգելքի և ինամակալութեան տակ:

13) Թաղական Խորհուրդի անդամ կրնան ընտրուիլ այն պաշտակատեսի հայերը, որ կը լրացնեն չեռեւեալ պայմանները:

- Ա. — Լրացուցած են 30 տարին, կամ 25 տարեկան են, սակայն ունին միջնակարգ կրթութիւն:
- Բ. — Ունին ընտրողի բոլոր իրաւունքներն ու յատկութիւնները համայնքին մէջ:
- Գ. — Անդամ են Համայնքին առնուազն տարի: մը ի վեր:
- Դ. — Պուկարերէն կամ հայերէն գրել կարգալ գիտեն:
- 14) Չին կրնար Թաղ. Խորհ. անդամ ընտրուի:
- Ա. — Այն անձերը որոնք սեւէ սլաճմանագրութիւն ունին համայնքին հետ:
- Բ. — Եկեղեցական պաշտօնեաները:
- Գ. — Հայ Համայնքին և Ազգ. վարժարաններու պաշտօնեաները ու ծառայողները:
- Դ. — Այն անձերը որոնք իրարու գործի ընկեր են կամ մինչեւ երկրորդ աստիճան արեւակցական կապ ունին:
- Ե. — Մնանկ հոշակուածները, մինչեւ իրենց վերահաստատումը:
- Զ. — 12-րդ յօդուածին մէջ յիշուածները:
- Է. — Այն պարագային երբ կ'ընտրուին այդպիսի ազգականներ կամ գործի ընկերներ, ընտրուած կը համարուի առաւելագոյն ձայն ստացողը: Չայներու հաւասարութեան պարագային վիճակ կը ձգուի:
- 15) Ընտրողներու ցուցակը կը յայտարարուի եկեղեցւոյ բակը. ամէնաուշը ընտրութեան թուակառնէն 15 օր առաջ:
- Ամէնաուշը ընտրութեան թուականին հինգ (5) օր մնացած, ցանկին մէջ կը կատարուին, ըստ այդ կանոնագրութեան յայտարարուած ու հարկաւոր սըրբադրութիւնները՝ որմէ յետոյ ցուցակը կը փակուի,

Թաղապետութեան պատուիրակին ներկայութեան և կը յանձնուի անոր:

16) Ընտրութիւնը կը տեւէ միայն մէկ օր: Ժամը Ցէն մինչեւ 17-ը: Եթէ սեւէ սլաճմանով ընտրութիւնը տեղի չունենայ, շաբաթ մը յետոյ կը ձեռնարկուի նոր ընտրութեան: Եթէ այդ օրն ալ ընտրութիւնը չկատարուի, Համայնքին աւագերէց քահանան, կը ներկայացնէ Թեմական Խորհուրդի միջոցաւ Արտ. Գործոց և Կրօնից Նախարարութեան Եռանդամ յանձնախումբ մը, որը ժամանակաւորապէս կը փոխանորդէ Թաղ. Խորհուրդը իր բոլոր իրաւունք և պարտականութիւններով, բացի Ելեւմտացոյցը քուէարկելու իրաւունքէն: Համայնքային Խորհուրդի կողմէ կը կազմուի Եռանդամ յանձնախումբը: Հոն ուր Համայնքային Խորհուրդը գոյութիւն չունի, Եռանդամը կը կազմուի Համայնքին Աւագերէց քահանային կողմէ:

17) Ամէն ընտրող նախապէս պէտք է համայնքէն ստանայ ընտրական իրաւունքի վկայութեան թուակառն: Այս վկայութեանը ներկայացնելով, և նշանակուելով ընտրական ցուցակին մէջ, կը մասնակցի քուէարկութեան: Քուէարկութիւնը կը լրացանամ և գաղտնի:

18) Ընտրութիւնները կը կատարուին և կը դեկավարուին ընտրական դիւանէն, որ կազմուած է: Նախագահ՝ պուկար Թաղապետութեան մէկ անդամը: Անդամներ՝ երկու հոգի հայ համայնքէն որոնք ընտրելու իրաւունք ունին և հայ համայնքի Աւագերէց քահանայէն նշանակուած են, իսկ իբր գործավար՝ հայ համայնքի քարտուղարը:

ԾԱՆՈԹ. — Բուեադրերու քեկնածուները իրա-

ունք ունին փոխաճորդներու միջոցաւ հետեւելու դիւանին մօտ, ընտրութեան ընթացքին:

19) Թեկնածուներու քուէաթղթերը կը յանձնուին ընտրական գիււանի նախագահին, ընտրութեան սկսելէն առաջ, ինչորպէս զի ստորագրուած (հինգ) 5 հօգի ընտրողներէ, որունմէջ ցոյց կը տրուին թեկնածուներու անունները, քուէաթղթերու մէջ իրենց կարգը, քուէաթղթերու գոյնը և փոխանորդի անունը:

ՄԱՆՕԹ. — Թեկնածուներու համաձայնութիւնը անհրաժեշտ է, վկայագրով մը, կամ իր կողմէ նախապէս տրուած գրաւոր յայտարարութեամբ մը, կամ իր կողմէ ստորագրուած ու դիւանին ուղղուած խնդրագրով մը:

20) Ամէնաուշը ընտրութեանէն 3 օր յետոյ, ընտրութեան վերաբերող բոլոր թղթերը, քուէաթղթերով մէկտեղ, ընտրողական գիււանին կողմէ, Թեմական Խորհուրդի միջոցաւ կը ղրկուին Արտաքին Գործոց և Կրօնից Նախարարութեան, ու յանձնախումբ մը կազմուած, Գաւանութեանց բաժնի անօրէնէն՝ իբր նախագահ, Թեմական Խորհուրդի մէկ պատուիրակէն՝ իբրեւ անդամ, կուսուճնասիրէ ընտրութեան թղթերը և իր կարծիքը կը յայտնէ անոր օրինաւորութեան մասին:

Ընտրութեան վաւերացումը կը լլայ նոյն յանձնաժողովին զեկուցմամբ ու Արտ. Գործոց և Կրօնից Նախարարութեան հրամանով:

21) Ընտրութիւնը բեկանուելու պարագային, Արտաքին Գործոց և Կրօնից Նախարարութիւնը նոր ընտրութեանց հրահանգ կուտայ:

22) Երբ Թաղական Խորհուրդ մը կը լուծուի, կամ թէ փոխ-ընտրելիներու ցանկը սպառնալով փոք-

րամասնութիւն կը մնայ, Արտաքին Գործոց և Կրօնից Նախարարութիւնը Թեմական Խորհուրդի համաձայնութեամբ կը նշանակէ եռանդամ յանձնախումբ մը, ցոյց տրուած պատկանեալ Համայնքի Խորհուրդին կողմէ և ներկայացուած նոյն Համայնքի Աւագերէց քահանայէն: Եռանդամ յանձնախումբը՝ կը վարէ համայնքին գործերը մինչև Թաղ. Խորհուրդի ընտրութիւնը: Իսկ հոն ուր Համայնքային Խորհուրդ չկայ, եռանդամ յանձնախումբը ցոյց կը տրուի ակաւոյն Աւագերէց քահանայէն: Եռանդամին ընտրութեան հրամանագրով կորոշուի միաժամանակ նոր ընտրութեան օրը, որը պէտք է կատարուի երեք ամսուայ ընթացքին ամէնաուշը:

ՄԱՆ. — Թաղ. Խորհուրդի ամբողջ կազմի կամ ունեւ մեկ անդամին հրաժարականը կը տրուի տեղայն Աւագերէց քահանային, որք զայն անմիջապէս կը յղէ Թեմական Խորհուրդի միջոցաւ Արտ. Գործ. և Կրօնից Նախարարութեան:

23) Թաղական Խորհուրդի անդամները, ընտրութեան վաւերացումի հաշորդուելէն յետոյ ամէնաուշը մինչև 7 (եօթ) օր, կը նտրեն իրենց երէց անդամին նախագահութեամբ, ատենապետ, ատենադպիր և գանձապահ: Ընտրութեան մասին կը կազմուի երեք միօրինակ արձանագրութիւն, որոնցմէ մէյմէկ հատ կը ղրկուի, Աւագերէց քահանային միջոցաւ, Թեմական Խորհուրդին և վերջինիս միջոցաւ Արտ. Գործ. և Կրօնից Նախարարութեան, առ ի գիտութիւն:

24) Իր կազմութեանէն յետոյ Թաղ. Խորհուրդը կը նդուանի իր նախորդէն համայնքին հաշիւներն ու գործաւարութիւնը: Այս առթիւ կը կազմուին պէտք

եղած աքտերը որոնց պատճեններէն Աւագ քա-
հանային միջոցաւ կը գրկուին Թեմական Խորհուր-
դին և վերջինիս միջոցաւ Արաքսի Գործոց և Կրօ-
նից Նախարարութեան ի գիտութիւն: Գործերու և
հաշիւներու ստացման սլարազային կամ աւելի ուշ,
երբ նոր Թաղական Խորհուրդը գտնէ իր նախորդին
ոեւէ մէկ զեղծումը, պարտաւոր է մէկ ամսուայ ըն-
թացքին հարկ եղածը գործադրել յանցաւորը գտնելու
և պատժելու համար:

25) Պուլկար Ընտրական օրէնքին պատմական
արամադրութիւնները ի զօրու են նաև Թաղական
խորհուրդներու ընտրութեանց պարագային:

III. ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

26) Թաղական Խորհուրդը կը զեկազարէ և կը
յանձանձէ համայնքին ինչքերը, և կը ներկայացնէ
զայն ամէն տեսակէտով, բացի այն պարագաներէն,
որոնք ներկայ կանոնադրութեան համաձայն, Հոգա-
բարձութեան կամ Համայնքային Խորհուրդի իրա-
ւասութեան կը վերաբերին: Անիկա միամամանակ հոգ
կը տանի ու կը պահպանէ համայնքին գոյքերն ու
կալուածները: Կը հսկէ Թաղ. Խորհուրդի պաշտօնէու-
թեան և հոգ կը տանի եկեղեցւոյ կարգ կանոնին ու
առողջապահիկ պայմաններուն: Թաղ. Խորհուրդին են-
թակայ հաստատութեանց պաշտօնէութիւնը, ինչպէս
նաև քահանաները ու եկեղեցւոյ պաշտօնեաները կը
նշանակուին Թաղական Խորհուրդէն:

ԾԱՆ. — Եկեղեցւոյ ներքին կարգապահութեան
համար կը պատրաստուի առանձին կառնճագիր:

27) Թաղ. Խորհուրդը, իր իրաւասութեան վե-
րաբերել խնդիրներու մասին որոշումներ կաննէ և
համերաշխաբար պատասխանատու է համայնքի շա-
հերուն վնասող, կամ, ներկայ կանոնադրութեան տրա-
մադրութեանց հակառակ առնուած որոշումներուն
համար: Անիկա կը ներկայացնէ Համայնքը, իր վար-
չութեան վերաբերել քույր հարցերու և գործերու
նկատմամբ:

28) Ատենապետ, ատենադպիր և զանձապահ, կը
կազմեն Թաղ. Խորհուրդի դիւանը: Անոնք համերաշ-
խաբար պատասխանատու են Թաղ. Խորհուրդի որո-
շումներու, անոր պիւտճէի ճշգրիտ գործադրութեան
և ընդհանրապէս անոր իրաւասութեան ներքեւ գրու-
նուող գործերու և կալուածներու մատակարարման
մէջ ցոյց տրուած անկանոնութեանց և անկարգու-
թեանց համար:

29) Թաղ. Խորհուրդի ատենապետը կը ներկայա-
ցնէ համայնքը և անոր շահերը, վարական և դա-
տական իշխանութեանց առջեւ, իր իրաւասութեանց
սահմաններուն մէջ: Կը հսկէ Թաղ. Խորհուրդի կողմէ
տրուած որոշումներու գործադրութեան, ժողովի կը
հրաւիրէ Թաղ. Խորհուրդը, կը վարէ նիստեր և կը
հսկէ դիւանաթղթերու կանոնաւորութեան:

30) Թաղ. Խորհուրդի անդամներէն և ոչ մէկը
չկրնար լքել իր պաշտօնը, նախ քան իր հրամարա-
կանին պաշտօնապէս ընդունուիլը Արտ. Գործոց և
Կրօնից Նախարարութեան հրամանագրով, ուղղուած
Թեմական Խորհուրդի միջոցաւ տեղւոյն Աւագերէց
քահանային:

Հրամարել անդամին տեղ Նախարարութիւնը

կը նշանակէ Թեմական Խորհուրդի առաջարկութեամբ, քուէարկութեամբ ընտրուած յաջորդ փոխանդամը:

31) Թաղ. Խորհուրդի անդամութիւնը պատուակալ ու ձրի է, բացի միայն այն պարագայէն, երբ Թաղ, Խորիւրդը լրիւ կազմի մէջ կը վճռէ դիւանին անդամներուն միոյն որոշ ամսավճար մը, հաւանութեամբ Համայնքային Խորհուրդին:

32) Իւրաքանչիւր Թաղ. Խորհուրդ կունենայ հետեւեալ տոմարները.

- Ա. — Ընտանեկան տոմար:
- Բ. — Հայ համայնքի ընտրական ցուցակ:
- Գ. — Ատենադրութեանց տետր:
- Դ. — Գլխաւոր Ելեւմտից տոմար:
- Ե. — Մնտուկի տետրակ:
- Զ. — Ընկալագրերու տետր:
- Է. — Գոյքերու տետր (ինվէնթար):
- Ը. — Ներածուած թուղթերու տետր:
- Թ. — Արտահանուած թուղթերու տետր:
- Ճ. — Պարտաւորիչ ուսման ենթակայ տղոց տետր:
- ԺԱ. — Ծնունդներու տետր:
- ԺԲ. — Ընդհանուր մեռելներու տետր:

№ 3, 5, 6, 7, տոմարները, ժապաւինեալ կը թուագրուին ու կը վաւերացուին Թեմական Խորհուրդէն:

33) Թաղ. Խորհուրդի կնիքը և նամակի թղթերը կը կրեն պուլկար պետական դրոշմը, հետեւեալ վերօտառութեամբ. «Պուլկարիա. Հայ Համայնք՝ ի.» և այն պուլկարերէն:

IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ընդհանուր կապ և միութիւն հաստատելու նըպատակով, Թաղական Խորհուրդի, Հոգաբարձութեան և մշակութային—բարեգործական ընկերութեանց գործունէութեան միջեւ, ամէն հայ համայնքի մէջ ուր Հոգաբարձութիւն և կամ մշակութային—բարեգործական ընկերութիւն կայ, կը հիմնուի Համայնքային Խորհուրդ:

Համայնքային Խորհուրդը կը բաղկանայ, Թաղ. Խորհուրդէ և Հոգաբարձութենէ, մշակութային—բարեգործական ընկերութեանց մէկ կամ երկու ներկայացուցիչներու հետ միասին: Սոյն ներկայացուցիչները կընտրուին համայնքին մշակութային—բարեգործական ընկերութեանց վարչութիւններու հաւաքական ժողովէն: Այդ ժողովին կը մասնակցին միայն այն ընկերութիւնները որոնց կանոնադրութիւնը վաւերացուած է Թաղական Խորհուրդէն:

Համայնքային Խորհուրդը ունի հետեւեալ իրաւունքները.

- Ա. — Կորոչէ Թաղ. Խորհուրդի և Հոգաբարձութեան պիւտճէն:
- Բ. — Կը վճռէ ազգային անշարժ կալուածներու, առ ու ծախի, փոխանակութեան կամ իբրօքի խնդիրները:
- Գ. — Կը կնքէ ազգային փոխառութիւն ու կարօտնէ շինութիւններ:
- Դ. — Կարօտնէ պիւտճէով չի նախատեսուած նորոգութիւններ:
- Ե. — Բարեգործական նպատակներու մասին, պիւտճէի մէկ գրիչէն միւսը գումարներու փոխադրու-

Թիւնը, և ընդհանրապէս կը վճսէ բոլոր այն հարցերը, որոնք վեր են Թաղական Խորհուրդի, Հոգաբարձութեան և մշակութային—բարեգործական ընկերութեանց իրաւասութեանէն:

Զ. — Կը լսէ ու կը վաւերացնէ Թաղ. Խորհուրդի, Հոգաբարձութեան և մշակութային—բարեգործական ընկերութեանց կիսամեայ զեկուցումները:

Է. — Հոգ կը տանի, հայ կրթական գործին ու մշակութային ընկերութեանց բարևոք գործունէութեան: ԾԱՆ. — Վերոյիշեալ Բ. եւ Գ. կետերը գործադրելու համար անհրաժեշտ է Համայնքի բոլոր անդամներու $\frac{2}{3}$ -ի հաւանութիւնը, հանրաժողով ստացուած:

35) Համայնքային Խորհուրդը պարտաւոր է երկու ամիսը անգամ մը ժողով գումարել, ինչպէս նաեւ ամէն անգամ՝ երբ այդ կը պահանջուի Թաղ. Խորհուրդէն կամ Հոգաբարձութեանէն: Համայնքային Խորհուրդը ժողովի կը հրաւիրէ և անոր կը նախագահէ Թաղական Խորհուրդի ատենապետը: Քարտուղար և անոր օգնականներ եթէ պէտք ըլլայ, կը նստուին ատաղին նիստին մէջ: Քարտուղարը կը պահէ Համայնքային Խորհուրդի ատենադրութիւնները ու թուղթերը:

Թաղական Խորհուրդը ու Հոգաբարձութիւնը իրենք կը գործադրեն իրենց պիւտճէները: Միեւնոյն անձը չի կրնար միաժամանակ անդամ ըլլալ ե՛ւ Թաղ. Խորհուրդի և Հոգաբարձութեան:

V. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԻԻՏՅՈՒՆ

36) Համայնքի Ելեւմտակ. տարին կսկսի Յունիս 1-ին: Պիւտճէի գործադրութիւնը կսկսի նոյն տար-

ւոյ Սեպտ. 1-ին և կը վերջանայ յաջորդ տարի 31 Օգոստոսին:

37) Եթէ սեւէ պատճառով պիւտճէի նախագիծը մինչեւ Ելմտական տարւոյ սկիզբը քուէարկուած չըլլայ, մինչեւ քուէարկուելը, ի դօրու է նախորդ տարուայ պիւտճէն:

38) Պիւտճէի իւրաքանչիւր գումարը կը գործածուի միայն նախատեսուած նպատակին: Ոչ մէկ գումար չի կրնար մէկ գրիչէն միւսը, փոխադրուել ատանց Համայնքային Խորհուրդի որոշման:

39) Համայնքային պիւտճէին աւելորդէն կը կազմուի նոյն Համայնքի Ֆօնդը: Այս ֆօնդին մէկ չորրորդ մասը կը յատկացուի Թեմ. Խորհուրդի մօտ գտնուող Ընդհ. Ֆօնդին:

40) Թաղական Խորհուրդը պարտաւոր է ամէնաուշը մինչեւ 31 Դեկտեմբեր, հրապարակել եկեղեցւոյ բակը, կամ այլ ձեւով, նախորդ տարուայ պիւտճէի գործադրութեան հաշուեկշիռը, վաւերացուած Համայնքային Խորհուրդէն: Հաշուեկշիռի մէկ պատճէնը կը ղրկուի Թեմական Խորհուրդին:

VI. ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱՊԱՀ ԵՒ ՀԱՇՈՒԿՏԻՈՒԹԻՒՆ

41) Գանձապահը կը գանձէ համայնքին հասոյթները, կը կատարէ ծախսերը արդարացուցիչ փաստաթղթերով, քուէարկուած պիւտճէի համաձայն:

42) Համայնքի գանձապահի պաշտօնը, վարձատրութեան փոխարէն վարող պաշտօնեան, կուտայ երաշխաւորութիւն Համայնքային Խորհուրդի որո-

չած չափով ու ձևով: Երաշխաւորագիրը կը պահուի Համայնքային Խորհուրդի նախագահին քով:

43) Գանձապահը չի կրնար ընթացիկ ծախսերու համար Թաղ. Խորհուրդի կողմանէ ատենադրութեամբ որոշուած գումարէն աւելի դրամ պահել սնտուկը: Մնացեալ հասոյթները ամէն ամիս ընթացիկ հաշուով կը յանձնուին, Թաղական Խորհուրդի կողմէ որոշուած ուել դրամատուն:

44) Գանձապահը չի կրնար ուել ծախս ընել առանց Թաղ. Խորհուրդի ատենապետի հաւանութեան: Վճարման արածնագրերը, ինչպէս նաեւ միւս բոլոր թուղթերը, կստորագրուին ատենապետին ու գանձապահին կողմանէ:

45) Պիւտձէին բոլոր ծախքերը կարդարացոտին կանոնաւոր արդարացուցիչ փաստաթղթերով: Այս թուղթերը ենթակայ են պետական «գրոշմ»ի տուրքի, և ունի պետական համապատասխան թղթերու ձևը:

46) Պետական Ելմտական տեսուչները կրնան ի պահանջել հարկին քննութեան ենթարկել հաշիւները: Քննութեան աքար երկու օրինակ կը ղրկուի Արտ. Գործ. և Կրօնից Նախարարութեան: Նախարարութիւնը այդ օրինակներէն մին կը ղրկէ Թեմական Խորհուրդին, անոր միջոցաւ ուղարկուելու համար Համայնքին Խորհուրդի նախագահին պէտք եղած հրահանգներով:

47) Ելքի և Մուտքի մէջ տեսնուած մէն մի անկարգութեան և անկանոնութեա մասին, Համայն-

քային Խորհուրդը կը պահանջէ հարկաւոր բացատրութիւնները և պատճառարանեալ որոշմնագիր մը կը հրատարակէ:

VII. ՀԱՅ ՎԱՐՎԱՐԱՆՆԵՐ

48) Հայ նախակրթարաններու և բարձրագոյն նախակրթարաններու մէջ դասաւանդութիւնը կը լլայ հայերէն և պուլկարերէն լեզուով:

49) Հայ վարժարանները կը կառավարուին հայ հոգաբարձութիւններէ: Վերջինները ինքնավար են իրենց իրաւասութեան սահմանին մէջ: Անոնք կը յանձնան Վարժարանին ինչքերն ու հասոյթները ներկայ կանոնադրութեան 34-րդ յօդուածի համաձայն:

50) Հոգաբարձութիւնը կը նշանակէ ուսուցիչները: Նշանակումի ատեն անիկա պարտաւոր է նկատի առնել թեկնածուին աւելի բարձր կրթական ցեղը:


Հայերէն լեզուով դասաւանդութեան թեկնածուները պարտաւոր են հայ միջնակարգ վարժարանէ մը վկայուած ըլլալ:

VIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

51) Ընդհանուր ատմամբ Պուլկարահայութեան վերաբերեալ հարցերու համար կը հիմնուի Ընդհ. Ժողով, որ կը զուգարուի ի . . . :

52) Ընդհ. Ժողովի պատգամաւորներ կը նորոտիջ Թաղ. Խորհուրդներու ընտրութեանց ատեն և միեւնոյն ձևով: Ընդհ. Ժողովին մանտաթը երկու տարի է: Ընտրութիւնը կը վաւերացուի ներկայ կանոնա-

00851



գրութեան 20-րդ յօդուածին մէջ նախատեսուած ձեւով:

ԾԱՆ. — Պատգամաւորական ոեւե արձախ մը քափուր մնալու պարագային, յաջորդութիւնը կը կատարուի ներկայ կանոնադրութեան մէջ նախատեսուած ձեւով: Եթէ փոխանցում չի կայ նոր ընտրութիւն կը կատարուի:

53) Գիւրգի, Սօֆիայի, Վանայի, Ռուսոնքի հայ համայնքները կը նստեն երկու քահանայատգաւոր, իսկ բոլոր մնացեալ համայնքները մէկ մէկ պատգամաւոր:

ԾԱՆ. — Պատգամաւորներ կը ներկայացնեն ամբողջ Պուլկարահայութիւնը եւ ոչ քէ այն համայնքներու միայն ընտրուած են:

54) Պատգամաւորական թեկնածուները փափաքելի է որ համապատասխանեն յօդ. 13-ի նախատեսած պայմաններուն:

55) Ընդհ. ժողովը կը գումարուի կանոնաւոր կերպով ամէն տարի, Չասկի տօներուն: Իսկ արտակարգ կերպով ամէն անգամ՝ երբ պատգամաւորներու ընդհանուր թուին $\frac{2}{3}$ -ը գրաւոր կերպով պահանջէ, և կամ Թեմական Խորհուրդը իր լրիւ կազմին մեծամասնութեամբ անհրաժեշտ գտնէ զայն:

56) Հերթական Ընդհ. ժողովները կը չրաւիրուին Թեմական Խորհուրդէն, որը նախապէս կը հաղորդէ օրակարգը Արտաքին Գործոց և Կրօնից Նախարարութեան: Իսկ արտակարգ նիստի չրաւիրելու համար անհրաժեշտ է Թեմական Խորհուրդի լրիւ կազմին միաձայն որոշումը վաւերացուած համապատասխան նախարարութեան կողմէ:

Սոյն որոշման մէջ կը յիշուին այն բոլոր չարքերը, որոնք նիւթ պիտի կազմեն Ընդհ. ժողովի օրակարգին:

ԾԱՆ. — Ժողովը կրնայ զբաղիլ նաեւ օրակարգին մէջ չարձանագրուած հարցերով:

57) Ընդհ. ժողովի նիստերը կը վարել դիւանը, բողոքացած նախագահէ, փոխ-նախագահէ և ժողովի անդամներէն ընտրուած երկու քարտուղարներէ:

58) Ժողովը իր նիստերուն համար կը մշակէ ներքին կանոնադիր մը:

59) Ընդ. ժողովը կը զբաղի հետեւեալ շարքերով.
Ա. — Թեմակ. Խորհուրդի ստաջարկով կընտրէ ստաջնորդ, կամ կորոչէ անոր հրամարումը,
Բ. — Կընտրէ Թեմական Խորհուրդ, կամ կորոչէ անոր հրամարումը:

Գ. — Համեմատական չափով սուրբ կը դնէ Պուլկարայ բոլոր համայնքներուն վրայ, Թեմ. Խորհուրդի և առաջնորդարանի պահպանութեան համար:
Դ. — Կը քուէարկէ Թեմ. Խորհուրդի և առաջնորդարանի պիւտոճէն:

Ե. — Կը լսէ Թեմ. Խորհուրդի համարտուութիւնը և կը դնահատէ անոր գործունէութիւնը:

Զ. — Որոշումներ կառնէ ընդհանուր հայ ազգային և մշակութային բնոյթ կրող շարքերու մասին:

Է. — Կընայ վերաքննել կամ լրացնել ներկայ կանոնադրութիւնը:

IX. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

60) Թեմական Խորհուրդը Պուլկարահայութեան

բարձրագոյն ներկայացուցիչն է և ընդհանուր ժողովին գործադիր մարմինը: Կընտրուի Ընդհ. ժողովէն և իբ մանտաթը կը տեւէ մինչեւ Ընդհ. ժողովի մանտաթին աւարտումը: Թեմական Խորհուրդը կը բաղկանայ 7 (5) հոգիէ, որոնք մնայուն կերպով կը բնակին, . . . :

61) Այն պարագային երբ Թեմական Խորհուրդը իր անդամներու հրատարումով կամ ուրիշ ոեւէ պատճառով փոքրամասնութիւն մնայ, մինչեւ մէկ ամիս, Ընդհ. ժողովը կը հրուիրէ արտակարգ նիստի:

62) Թեմական Խորհուրդի պաշտօնն է՝

Ա. — Իր իրաւասութեան սահմաններուն մէջ հոգ տանիլ և ընել ձեռնարկներ՝ Պուլկարահայութեան բազմակողմանի զարգացման համար:

Բ. — Գործադրել Ընդհ. ժողովի որոշումները:

Գ. — Հսկել համայնքներու և անոնց մարմիններու կողմանէ ներկայ կանոնադրութեան ճշգրիտ գործադրութեանը:

Դ. — Վարել առաջնորդարանի պիւտճէն:

Ե. — Հոգ տանիլ Պուլկարիոյ մէջ հայ ընդհանուր բարեգործութեան:

Զ. — Հսկել հայ դպրոցներու յառաջդիմութեան և բարեօր ընթացքին:

Է. — Գործադրել ներկայ կանոնադրութեան 105-րդ յօդուածին նախատեսած կարգապահական պատիմները:

63) Թեմական Խորհուրդը կը նշանակէ տեսուչ, հայ կրթական գործին մասնագէտ:

Տեսուչին պաշտօնն է՝

Ա. — Հսկել հայ վարժարաններու հայերէն ուսուցման և աղբ. դաստիարակութեան գործին:

Բ. — Ծրագրել և առաջարկել Թեմական Խորհուրդին և Աղբ. վարժարաններու Հոգաբարձութիւններուն հայ կրթական գործին յառաջդիմութեան ստատուգ միջոցներ, և միակերպել աղբ. վարժարաններու ծրագիրն ու դասաւանդութիւնը:

Տեսուչութիւնը կը մատակարարուի Թեմական Խորհուրդէն ու անոր առջեւ պատասխանատու է:

64) Իր իրաւասութեան սահմանին մէջ Թեմ. Խորհուրդը կը յարաբերի իշխանութեանց հետ և պատասխանատու է անոր տոջեւ:

X. ԱՌԱՋՆՈՑԴ

65) Պուլկարիոյ հայ Առաջնորդութիւնը եկեղեցական—դաւանական ու կանոնական տեսակէտով կենսութարկուի էջմիածնայ Մայր Աթոռին:

66) Պուլկարահայ հողեւորականութեան գլուխը կը գտնուի առաջնորդ մը՝ Թեմ. Խորհուրդին մօտ: Ան Թեմական Խորհուրդի առաջարկով Ընդհ. ժողովէն կընտրուի և վաւերացուիլէ յետոյ կանցնի պաշտօնի:

67) Արտ. Գործ. և Կրօնից Նախարարութեան կողմէ առաջնորդի ընտրութեան վաւերացումէն յետոյ, Թեմական Խորհուրդը կը տեղեկացնէ զայն էջմիածին, Ն. Վեհափառութիւն Կաթողիկոսին, Հայրապետական Ս. Կանգակով Թեմին ծանուցանելու համար:

68) Առաջնորդը Պուլկարահայութեան կրօնական պետն է, ու իրաւապէս կը նախագահէ Թեմ. Խոր-

չորդին ու նախագահն է Դասաստանական մարմնին:

Ան չի մասնակցիր Թեմական Խորհուրդի գործավարութեան, այլ կը մասնակցի անոր խորհրդակցական ճախով:

Անիկա պատասխանատու է Թեմական Խորհուրդին ու անոր միջոցաւ կը յարաբերի պետական իշխանութեանց հետ:

69) Առաջնորդական թեկնածուն պէտք է զիտնայ կամ յանձն առնէ երկու տարւայ միջոցին պուլկարերէն սորվիլ: Ըլլայ պուլկարազգատակ կամ զրաւոր կերպով յանձն առնէ պուլկարազգատակութիւնը ընդունիլ իր ընտրութեան վուեերացումէն վերջ:

ԾԱՆ. — Սիկչեւ առաջնորդի բնօրուքիւնը, ինչպէս նաեւ արուին քափուր մնացած պարագային, իրաւապէս առաջնորդական փոխանորդ է, Թեմական Խորհուրդի գեներալ վայրին հայ համայնքին աւագերեց քահանայ:

70) Արա, Գործ. և Կրօնից Նախարարութիւնը նկատի առնել յետոյ առաջնորդի ընտրութեան կանոնաւորութիւնը ու օրինաւորութիւնը, հարկ եղածը կը կատարէ ընտրութեան առաջնորդին վաւերացմանը համար:

71) Առաջնորդի պաշտօնն է՝

Ա. — Հոգ տանիլ հօտին կրօնական և բարոյական բարձրացման:

Բ. — Քննողներ ապա ու ընել հովական այցելութիւններ: Սոյն այցելութիւնները կը տրուին ամէն համայնքի գոնէ տարին անգամ մը և ամէն անգամ՝ երբ Թեմ. Խորհուրդը հարկ տեսնէ:

Գ. — Կը հսկէ կրօնական ու եկեղեցական պաշտօնեաներուն պարտականութեանց գործադրութեան:

Դ. — Կը ձեռնադրէ քաջանաներ ու կարգ կուտայ եկեղեցական պաշտօնեաներու:

Ե. — Կը ղեկավարէ առաջնորդութեան ղիւանատուներ:

72) Առաջնորդը Արա, Գործոց և Կրօնից Նախարարութեանէն կտանայ թոշակ, պետական պիւտճէով, ու վարձատրութիւն Թեմ. Խորհուրդի պիւտճէէն:

73) Առաջնորդը չի կրնար իր թեմէն շնորհալ առանց Թեմ. Խորհուրդի հաւանութեան և Արտաքին Գործոց և Կրօնից նախարարութեան արտօնութեան:

Առաջնորդի բացակայութեան իր գործերը կը վարէ Թեմական Խորհուրդը կամ առաջնորդական փոխանորդը:

XI. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆԱՏՈՒՆԸ

74) Թեմ. Խորհուրդի և Առաջնորդութեան ղիւանատուներ մէկ է: Թեմ. Խորհուրդի և առաջնորդութեան ղիւանաթուղթերն ու թղթակցութիւնները կը վարէ քարտուղար—գանձապահ մը, նշանակուած Թեմական Խորհուրդէն: Ելմտական գործերը կը վարէ նոյն պաշտօնեան, Թեմ. Խորհուրդի պատասխանատուութեամբ:

Քարտուղար—գանձապահը կը ներկայացնէ Թեմ. Խորհուրդի գրաւոր որոշմամբ ճշտուած չափով երաշխաւորութիւն:

ԾԱՆ. — Ի պահանջել հարկին Թեմ. Խորհուրդը կրնայ նշանակել օգնական մը, քարտուղար—գանձապահին:

75) Թեմական Խորհուրդի և Առաջնորդութեան
չասոյթներն ու ծախսերը կը գործադրուին Ընդհ. ժո-
ղովէնքուէարկուած պիւտճէի համաձայն; Պիւտճէն կը
մշակուի Թեմ. Խորհուրդէն և կը ներկայացուի Ընդհ.
ժողովին ի վաւերացում:

Պիւտճէի գործադրութեան ատեն գրիչէ գրիչ
փոխադրութիւնը արգելուած է:

76) Թեմական Խորհուրդի և Առաջնորդութեան
ծախքերը գոցուելու համար հետեւեալ չասոյթները
կը հաւաքուին՝

Ա. — Պետական պիւտճէի նախատեսած գումարները,
առաջնորդական պաշտօնէութեան համար:

Բ. — Հայ համայնքներու վճարները:

Գ. — Վկայագրերէ, վաւերացումներէ, թարգմանու-
թիւններէ եւն. ստացուած գումարներ:

77) Թեմական Խորհուրդի մօտ կը հիմնուի Պուլ-
կարահայ բարեգործական—մշակութային նպատակնե-
րու համար ընդհանուր Փօնտ մը: Այս Փօնտը կը
կազմուի.

Ա. — Ներկայ կանոնադրութեան 39-րդ յօդուածին
նախատեսած չասոյթներէն:

Բ. — Թեմ. Խորհուրդի և Առաջնորդութեան պիւտ-
ճէի աւելորդներէն;

Գ. — Ի նպատակ սոյն Փօնտին եղած նուիրատու-
թիւններէ, կտակներէ եւն.;

ԾԱՆ. — Տօնիմ նպատակներ կորոշի Թեմական
Խորհուրդը:

78) Ընդհանուր Փօնտը կը կառավարուի Թեմ.
Խորհուրդէն, որը կօգտագործէ անոր չասոյթները
համաձայն վերջը մշակուելիք կանոնադրի մը:

XII. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԱՏԵԱՆՆԵՐ

79) Բոլոր ամուսնութեան ու ամուսնալուծման
դատերը, ինչպէս նաեւ ազգականութեան, որդեգրու-
թեան, անձնական վիճակի վէճերը ու կրօնական—ըն-
տանեկան բնոյթ կրող բոլոր միւս հարցերը, որչափ
որ դուրս կը մնան քաղաքային դատարաններու իրա-
ւասութեանց սահմանէն կը քննուին հայ դատաստա-
նական ատեաններէ;

80) Պուլկարիոյ մէջ կը հիմնուին երեք նախա-
դատ դատաստանական ատեաններ, Տիլիպէ, Վառնա
և Ռուսձուք, և Առաջնորդական Դատաստանական
ատեան մը, հոն ուր որ է առաջնորդին կամ անոր
փոխանորդին բնակավայրը; Նախադատ ատեանները
կը քննեն այն դատերը, որոնց մէջ դատի կանչուողը
կը բնակի համայնքի այն շրջանը, ուր կը տա-
րածուի ատեանին իրաւասութիւնը: Ատեանին են-
թակայ շրջանակը կորոչէ Թեմական Խորհուրդը:

81) Նախադատ ատեանը կը բաղկանայ նախա-
դահէ մը, որ է համայնքին աւագերէցը, և չորս աշ-
խարհականներէ իրրեւ անդամ: Թաղ. Խորհուրդը
պաշտօնի անցնելուն իր լրիւ կազմին մէջ կը նշա-
նակէ մինչեւ իր մանտաթին վերջը: Համայնքին ան-
դամ ութը աշխարհականներ, որոնք իրենց մէջ վի-
ճակով կը մասնակցին իւրաքանչիւր դատի:

82) Առաջնորդական դատաստանական ատեանը
կը բաղկանայ առաջնորդէն կամ անոր փոխանորդէն
իւր նախագահ և չորս աշխարհականներէ իրրեւ ան-
դամ: Վերջիններս կը նշանակէ Թեմական Խորհուրդը

ներկայ կանոնադրութեան 81-րդ յօդուածին նախա-
տեսած ձևով:

83) Հայ դատատանական ատեանները կը լու-
ծեն վէճերը, համաձայն հայ եկեղեցւոյ բարձրագոյն
մարմնոյն կողմէ դորձադրութեան մէջ եղող կարգա-
դրութիւններուն: Այդպիսի կարգադրութեանց չգո-
յութեան պարագային սովորութեան և արդարութեան
հիման վրայ:

84) Դատերը կը բացուին շահագրգռուած կող-
մերու դիմումին վրայ:

85) Նախ քան դատի օր նշանակուելը, ատեանի
նախադասը անձամբ կը հրաւիրէ դատուող կողմերը,
ու կը ջանայ հաշտեցնել դանտներ:

86) Գրաւոր դիմումէն առ առաւելն 15 օր վերջ
կորոչուի դատավարութեան օրը:

87) Երբ կողմերէն մին կանոնաւոր կերպով ըս-
տացած ըլլալով կոչնադիրը չի ներկայանար դատա-
վարութեան, դատավարութեան ընթացք կը արուի
եթէ ատեանը սեւէ արդելք չի գտնուի: Եթէ կանոնա-
ւոր կերպով կանչուած երկու կողմերն ալ չի ներկա-
յանան, դատը կը դադրեցուի վերանորոգելու իրա-
ւունքով:

88) Եթէ բացակայ կողմը ներկայացուցած է
ատեանին բանաւոր պատճառներ իր բացակայութեան
համար և կուզէ դատավարութեան յետաձգումը, ատ-
եանը պարտաւոր է յետաձգել զայն ուրիշ նիստի մը:

89) Կողմերը պարտաւոր են անձամբ ներկայա-
կալու դատական նիստին:

90) Գատավարութիւնը կարելի է յետաձգել,
պայցօյցներ հաւաքելու համար, միմիայն այն ատեան,
եթէ այդ մասին պահանջ ներկայացուած է, ամէնա-
ուշը գատավարութեան առաջին նիստին, կամ զրա-
ւորապէս՝ երկրորդին:

91) Ատեանը վճիռ կարծակի հիմնուելով հա-
ւաքուած, ատենագրութեան մէջ հաստատուած աւակ-
ներու, ի դօրու եղող կարգադրութիւններու, սովո-
րութիւններու և արդարութեան:

92) Ատեանի վճիռը պէտք է ըլլայ գրաւոր և
ստորագրուած ատեանի բոլոր դատաւորներէն: Ան
պէտք է պատճառարանուած ըլլայ, և տրուած՝ դա-
տավարութեան քննութենէն առ առաւելն 7 օր վերջ:
Վճիռը իսկոյն կուզարկուի Առաջնորդին որ առաւելն
15 օրուայ ընթացքին վաւերացնելէ յետոյ կը վերա-
դարձնէ պատկանեալ ատեանին:

93) Նախադատ ատեանի վճիռէն դժգոհ կողմը
կրնայ դիմել առաջնորդական ատեանին ի վերաբրն-
նութիւն, շահագրգռուող կողմերուն վճիռը հազորդ-
ւելէն մինչև մէկ ամիս պայմանաժամի միջոցին:

94) Գանդատագիրը կը տրուի վճիռը արձակող
ատեանին միջոցով: Գանդատագրին կը կցուին նաև
հակառակ կողմին տրուելիք պատճէններ:

95) Առաջնորդական ատեանը դատը կը քննէ
ըստ էութեան և կամ կը հաստատէ տրուած վճիռը,
կամ կը ջնջէ ու կը փոփոխէ զայն:

96) Նախադատ ատեաններու համար ներկայ կա-
նոնադրութեամբ նախատեսուած բոլոր կանոնները,

կողմերու կանչուելուն, դատավարութեան և վճիռ տրուելու մասին պարաւորիչ են առաջնորդական դատաստանական ատեանին համար: Վերջինին վճիռները օրինական ուժ ունին և վերջնական են:

97) Առաջնորդական դատաստանական ատեանին օրէնքի ուժ ուսացած բոլոր վճիռները գործադրութեան կը դրուին: Անոնց գործադրութիւնը կը կատարուի պուլկար քաղաքային դատավարութեան և միւս օրէնքներու կանոնադրութեանց մէջ նախատեսուած կարգով:

98) Գատաստանական ատեաններու պաշտօնական արքտերը, վճիռ եւն., կը տրուին հայերէն և պուլկարերէն լեզուներով:

99) Նախադատ և առաջնորդական դատաստանական ատեանները կը գանձեն սակեր, զորս լրացուցիչ կերպով պիտի որոշէ Քեմական Խորհուրդը:

100) Ամուսնութեան արտօնագիտ կուտայ Թաղ. Խորհուրդը, հիմնուած արուած խնդրագրի մը վրայ, որուն պէտք է կցուած ըլլան հետեւեալ տօքիւմանները.

- Ա. — Ծննդեան վկայականներ խօսեցեալներու:
- Բ. — Ազատ ամուսնութեան վկայագիր մը, որով կը հաստատուի թէ օրինական արգելքներ չիկան, օր. ազգականութիւն, ամուսնացած ըլլալու պարագայ:
- Գ. — Բժշկական վկայական, հաստատող թէ խօսեցեցեալները հոգեկան կամ վարակիչ հիւանդութիւն չունին:

101) Ազատ ամուսնութեան վկայական կը տրուի այն համայնքի Թաղ. Խորհուրդէն, որուն կը պատ-

կանի իրրեւ անդամ խնդրարկուն: Այս վկայականներու համար կը վճարուի Թաղ. Խորհուրդին կողմէ որոշուած սակ մը:

102) Ամուսնութեան տօք կատարարեն ամուսնացողները, քահանան և երկու արժանահաւատ վկաներ:

XIII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

103) Ներկայ կանոնադրութեան ընդունուելէն ամէնաուշը մինչեւ մէկ տարի, Քեմակ. Խորհուրդը Առաջնորդին կամ անոր փոխանորդին հետ իր յարաբերութիւնները ճշտող կանոնագիր մը պէտք է մըշակէ:

104) Ըստ ներկայ կանոնադրութեան կարգապահական պատիժներն են՝

- Ա. — Շանդիւմանութիւն:
- Բ. — Թոշակի մէկ մասէն զրկում (ամէնաշատը մէկ քառորդը, առ առաւելն 3 ամսուայ համար):
- Գ. — Պաշտօնէ առժամեայ հեռացում, առ առաւելն 3 ամսուայ համար, կէս թոշակի իրաւունքով:
- Դ. — Պաշտօնազրկում առ առաւելն 6 ամսուայ համար, առանց թոշակի:
- Ե. — Պաշտօնանկութիւն:
- Գ. Դ. Ե. կէտերու պատիժները կը տրուին համայնքային Խորհուրդի վաւերացմամբ:

ԾԱՆ. — Ներկայ կանոնադրութեամբ հաստատուած Ազգ. մարմններու կողմէ որոշուած տարեբեր վնասիչ շուգող ազգայիններու ամուսնեք կը հրատարակուին ցուցակով մը, Համայնքային Խորհուրդի արժանութեամբ:

Համայնֆային խորհուրդները այդպիսիներու հանդէպ
լրացուցիչ կերպով կորուսեն համապատասխան միջոցներ:

105) Եթէ սեւէ շամայնք չյարդէ ներկայ կանո-
նադրութեան արամագրութիւնները ու չի գործադրէ
Թեմ. Խորհուրդի օրինական կարգադրութիւնները,
Թեմ. Խորհուրդը կրնայ Թագ. Խորհուրդներու և Հո-
գարարձութիւններու մտին տնօրինել հետեւեալ
կարգապահական պատիժները,

Ա. — Գրաւոր դիտողութիւն,

Բ. — Գրաւոր դիտողութիւն շրջադերականով մը հա-
ղորդուած բոլոր շամայնքներուն:

Վ Ե Ր Ձ



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL015979

Գին 5 լեվա
Տպագրական ծախուց համար.

I-ва Печат. Произв. Кооперация „Работник“.